Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (կոդ Կ-739-05.12.2023-ՏՀ-01) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդ-վածը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է Կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով սույն մասով սահմանված սահմանափակումները:	Ընդունվել է: ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի ս թ ապրիլի 3-ին կայացած նիստում նախագծի վերաբերյալ լրացուցիչ քննարկումների արդյունքում եզրահանգումը եղել է այն, որ նախագծով առաջարկվող՝ հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկները, հայտարարագրերը, հաշվետվությունները, տեղեկությունները Հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներում չներկայացրելու, ինչպես նաև համալիր հարկային	Ընդունվել է:

			Սույն մասով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցում չի կատարվում, եթե շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը՝ ստացված շահաբաժիններից ֆիզիկական անձի վճարած եկամտային հարկի փոխհատուցման դիմումները հարկային մարմին ներկայացնելու օրը ներառող հարկային տարվա եւ (կամ) նախորդ հարկային տարվա ընթացքում ունեցել է անբողոքարկելի դարձած վարչական ակտով արձանագրված՝ Օրենսգրքի 408-րդ կամ 410-րդ կամ 412-րդ կամ 415-րդ կամ 416-րդ հոդվածների պահանջներից որեւէ մեկով խախտում: Սույն մասի երկրորդ պարբերությունում նշված խախտումներին վերաբերող ստուգման կամ այլ վարչական ակտի վարչական կամ դատական կարգով բողոքարկման արդյունքում ստուգման կամ այլ վարչական ակտի ուժի մեջ մնալը հիմք չէ սույն մասով նախատեսված դիմումների հիման վրա եկամտային հարկի փոխհատուցված գումարները պետական բյուջե վերադարձնելու համար:»:	ստուգմամբ կամ ուսումնասիրությամբ հայտնաբերված խախտումների մասով հինգ միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն ունենալու հետ կապված իրավախախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ ոչ բոլոր դեպքերում է, որ դրանք կարող են բնութագրվել որպես դիտավորությամբ կամ կանխամտածված իրավախախտումներ: Հետևաբար, այդ իրավախախտումների առկայության պարագայում շահաբաժիններից պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարները հետ ստանալու իրավունքը սահմանափակելը կարող է համարժեք չլինել կատարված իրավախախտմանը:	